ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ՝ ԱՐՓԵՆԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՇԱԿԻ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԳԱՎԱՆԴ ԳՅՈՒՂԻ
«ԱՆԱՀԻՏ » Մ/ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ՝ ՄԱՐԻԱՆՆԱ ԱՎԱԳՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1.

1.1 Ուսումնական գործունեության կազմակերպումը ավագ նախադպրոցական տարիքում 4

1.2 Ավագ նախադպրոցականների էկոլոգիական կրթության բովանդակության ընտրության սկզբունքները և առանձնահատկությունները 8

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 2. 17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 19

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը. Նախադպրոցականների բնապահպանական կրթությունն ուղղված է երեխաների գիտակցության, էկոլոգիական մշակույթի, շրջակա միջավայրի նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի ձևավորմանը, բնության հետ շփման, բույսերի և կենդանիների հանդեպ սիրո ու հարգալից վերաբերմունքի դրսևորումների զարգացմանը: Երեխան ստանում է բնության մասին հուզական տպավորություններ, զգացումներ, և արդեն իսկ այդ ընթացքում ձևավորվում են երեխայի էկոլոգիական մտածողության, գիտակցության, էկոլոգիական մշակույթի նախահիմքերը: Ուստի անհրաժեշտ է դեռևս նախադպրոցական տարիքից կարևորել երեխաների էկոլոգիական դաստիարակությունը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և վերլուծել էկոլոգիական դաստիարակության կազմակերպման ձևերը մանկապարտեզում:

Հետազոտության խնդիրներն են.

- Կատարել գրականության վերլուծություն, ուղղված էկոլոգիական դաստիարկության բովանդակության ու խնդիրների բացահայտմանը:
- Ներկայացնել էկոլոգիական դաստիարակության անցկացման առանձնահատկությունները մանկապարտեզի տարբեր տարիքային խմբերում:

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ **մեթոդները**.

- ✓ գրականության վերլուծություն,
- ✓ գործնական աշխատանք:

Հետազոտության կառուցվածքը. Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից, համակարգչային շարվածքով կազմում է 20 էջ:

ԳԼՈՒԽ 1.

1.1 Ուսումնական գործունեության կազմակերպումը ավագ նախադպրոցական տարիքում

Ընդհանուր ձևակերպմամբ՝ ուսումնական գործունեությունը մարդկային նպատակաուղղված ակտիվության տեսակ է, որի արդյունքում յուրացվում են գիտելիքներ, հմտություններ և կարողություններ: Նախադպրոցական տարիքի երեխան զարգանում է գործունեության միջոցով: Ի.Ա.Սեչենովը, մանկության շրջանը արժևորելիս նշում է, որ այս շրջանում երեխային փոխանցվում են սոցիալական փորձի յուրացման պատրաստի ձևեր, որոնք հեշտացնում են աշխարհընկալման գործընթացը: Պատրաստի ձևեր ասելով, Ի.Ա.Սեչենովը նկատի է առնում մանկան գործունեության ձևերը, որոնք, իսկապես, ձևավորվում և զարգանում են մեծահասակների օգնությամբ և նպաստում ծագած տարբեր խնդիրների լուծմանը: Գործունեության ցանկացած ձև պարունակում է որոշակի հասարակական փորձ, որի յուրացման ընթացքում ծագում և լուծվում են իմացական բնույթի տարբեր խնդիրներ: Գործունեության զարգացումը միաժամանակ իմացական խնդիրների լուծման գործընթաց է: Հետևելով Ի.Ա.Սեչենովի տրամաբանությանը, ինչպես նաև հիմնվելով Ա.Ն.Լեոնտյևի գործունեության ընթացքում երեխայի հոգեկանի զարգացման մասին հայտնի դրույթի վրա, կարելի է եզրակացնել, որ մտավոր զարգացման գործում երեխայի գործունեությունը նույնպես չափազանց արդյունավետ է:

Մտավոր դաստիարակության միջոց են առաջին հերթին գործունեության առաջատար ձևերը՝ առարկայական գործունեությունը և խաղայինը: Մտավոր զարգացմանը նպաստում են նաև կենցաղային և աշխատանքային գործունեության ձևերը: Անգնահատելի է տարրական մաթեմատիկայի կերպարվեստային և գեղարվեստա-խոսքային գործունեության ձևերի դերը երեյի մտավոր կարողությունների զարգացման գործում: Վերջերս մտավոր դաստիարակության համակարգում առավել քան կարևորվում է կառուցողական գործունեությունը[1]:

[1] В. К. Дьяченко. Организационная структура учебного процесса и ее развитие. М., Педагогика, 1989, сс25-30.

Մանկավարժական պրակտիկան փաստում է, որ վերջին տարիներին տարբեր տիպի կոնստրուկտորների ակտիվ ներթափանցումը նախադպրոցականների կյանք, զգալի բարձրացրել է նրանց տրամաբանական մտածողության մակարդակը: Ֆ.Ֆրյոբելի, Մ.Մոնտեսորիի, Ա.Վ.Զապորոժեցի, Լ.Ի.Վենգերի, Ն.Ն.Պոդյակովի, Ա.Պ.Ուսովայի բազմաթիվ հետազոտությունների արդյունքները փաստում են, որ նախադպրոցականի ինտելեկտուալ հնարավորությունները շատ ավելի բարձր են, քան թվում է առաջին հայացքից: Նախադպրոցականն ընդունակ է յուրացնելու և վերլուծելու երևույթների ինչպես արտաքին ակնառու հատկանիշները, այնպես էլ ներքին կապերն ու պատճառ-հետևանքային հարաբերությունները:

Պ.Յ.Գալպերինի ուսումնասիրությունների տվյալները խոսում են այն մասին, որ մտավոր գործողությունների ձևավորման փուլային մեթոդիկայի կիրառման պայմաններում նախադպրոցական տարիքում հնարավոր է նույնիսկ ձևավորել դեռահասին բնորոշ հասկացություններ: Վերջապես, մտավոր դաստիարակության միջոց է ուսուցումը և երեխայի ուսումնական գործունեությունը:

Երեխայի ճիշտ կեցվածքի ձևավորումն իրականացվում է մանկապարտեզի կրթադաստիարակչական ամբողջ աշխատանքի ընթացքում[2]:

Աշխատանքն իր բովանդակությամբ նախադպրոցական տարիքում լինում է հինգ տեսակի.

- Ինքնասպասարկում
- Կենցաղային տնտեսական աշխատանք
- Աշխատանք բնության գրկում
- Ձեռքի և գեղարվեստական աշխատանք
- Ուսումնական կամ մտավոր աշխատանք

Աշխատանքի առաջին տեսակը ինքնասպասարկումն է, այն ձևավորվում է վաղ տարիքում սեփական մարմինը սպասարկելու անհրաժեշտությունից: Ինքնասպասարկման աշխատանքը բաղկացած է մի շարք գործողություններից՝

[2] Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, /5-6 տարեկանների համար/, Երևան 2007թ էջ :

հանվելու և հագնվելու, հարդարվելու և հարդարելու, սպասքից օգտվելու,հիգիենիկ արարողություններից: Ինքնասպասարկման բովանդակությունը փոխվում է երեխայի զարգացման ընթացքում, ինքնասպասարկման գործողությունները բարդանում են և կատարելագործվում: Ինքնասպասարկման կարողությունները փոխանցում են երեխային ինքնավստահության զգացողություն և շնորհում որոշակի անկախություն մեծահասակներից: Ինքնասպասարկման ընդունակ երեխան ձգտում է ինքնուրույնության և փորձում է դրսևորել նախաձեռնություն նաև գործունեության այլ ձևերում[3]:

Աշխատանքի հաջորդ տեսակը կենցաղային-տնտեսական աշխատանքն է, որը հաջորդում է ինքնասպասարկմանը և ձևավորվում է մեծահասակներին հետևելով և ընդօրինակելով: Կենցաղային-տնտեսական աշխատանքի կարողությունները ձեռք են բերվում մեծահասակների օգնությամբ և երեխաներից պահանջում են լուրջ ջանքեր և համառություն:

Աշխատանքի երրորդ տեսակը երեխայի աշխատանքն է բնության գրկում: Աշխատանքի այս տեսակի կազմակերպումը չափազանց կարևորվում է նախադպրոցական տարիքում, քանի որ այն ունի մի շարք առավելություններ:

1. Աշխատանքը բնության գրկում հնարավորություն է տալիս երեխային հետևելու աշխատանքի արդյունքին, որն իր բնույթով հաճախ նյութական է և նման մեծահասակների արդյունավետ աշխաանքին: Օրինակ, ջրում է ծաղիկները կամ մրգատու ծառերը և տեսնում արդյունքը:
2. Աշխատանքը բնության գրկում երկարատև է և շարունակական բնույթի է: Այն ստիպում է երեխային համբերատար և նպատակաուղղված աշխատանքի միջոցով հասնել արդյունքի, նպաստում է մի շարք բարոյակամային որակների դաստիարակությանը:
3. Բնության գրկում աշխատանքի ընթացքում երեխան գործ ունի կենդանի օբյեկտների հետ՝ բույսեր, կենդանիներ և այլն:

[3] Гогоберидзе А.Г., Солнцева О.В. Дошкольная педагогика с основами методик воспитания и обучения. – СПб.: Питер, 2013. – 464 с.

4. Բնության գրկում աշխատանքն ունի հասարակական ուղղվածություն՝ ուղղված է բոլորին: Այն հնարավորություն է տալիս երեխային ուրախություն պատճառել դիմացինին և արժանանալ նրա շնորհակալական խոսքին:
5. Բնության գրկում աշխատանքի արդյունքում երեխան ճանաչում է բնության գեղեցկությունն ու բարոյական հզոր ուժը[4]:

Նախադպրոցական տարիքում աստիճանաբար ձևավորվում և բուռն զարգանում է երեխաների կողմից շատ սիրելի ձեռքի, ինչպես նաև գեղարվեստական- ստեղծագործական աշխատանքը: Ձեռքի աշխատանքի մանկավարժական նշանակությունն ունի կենսաբանական հիմնավորում, այն զարգացնում է երեխայի դաստակի և մատների մանր մկանները, ինչը գրգռում և ուժեղացնում է գլխուղեղի մի շարք կարևոր կենտրոնների աշխատանքը: Ձեռքի աշխատանքի կարևորությունը բազմիցս ընդգծել են հայ և արտասահմանյան մանկավարժները:

Գեղարվեստական աշխատանքը նախադպրոցական կրթօջախներում ներկայացված է երկու ուղղություններով.

- երեխաները պատրատում են ինքնաշեն իրեր, խաղալիքներ և զարդեր,
- սովորում են զարդարել խմբասենյակը, մանկապարտեզի դահլիճը կամ միջանցքը սեփական ուժերով պատրաստած իրերով, նախապատրաստում են իրենց ստեղծագործությունների ցուցահանդեսներ և տոնահանդեսներ:

[4]Монтессори М. Дом ребенка. М., 1920, с. 120—131.

1.2 Ավագ նախադպրոցականների էկոլոգիական կրթության բովանդակության ընտրության սկզբունքները և առանձնահատկությունները

Մի շարք աշխատություններում անընդմեջ էկոլոգիական կրթության համակարգի առաջին աստիճան է դիտարկվում կրտսեր դպրոցը: Արտասահմանյամ զարգացած երկրներում մանկավարժական տեխնոլոգիաները հաշվարկված են ավագ նախադպրոցական և դպրոցական տարիքի համար: Սակայն կրթության նախադպրոցական և կրտսեր դպրոցական աստիճանների համեմատությունը ցույց տվեց, որ կրտսեր դպրոցի էկոլոգիական կրթությունը չի կարող փոխարինել նախադպրոցական հաստատությունների էկոլոգիական կրթությանը: Նրանք անխախտելիորեն կապված են միմյանց հետ, լրացնում են միմյանց, բայց չեն բացառում մեկը մյուսին:

Նախադպրոցական տարիքը մյուսներից տարբերվում է կյանքի պայմանների իր պահանջների այն առանձնահատկություններով,որոնք ներկայացնում են երեխային նրա զարգացման տվյալ փուլում, շրջապատող աշխարհի նկատմամբ նրա հարաբերություններով, երեխայի անձի հոգեկան կառուցվածքի զարգացման մակարդակով, նրա գիտելիքներով ու մտածողությամբ, ֆիզիոլոգիական որոշակի առանձնահատկությունների ամբողջությամբ:

Գոյություն ունեցող ծրագրերում կրտսեր նախադպրոցական տարիքի երեխաներին շրջապատող աշխարհի հետ ծանոթացնելու համար բավականին մեծ ուշադրություն է դարձվում բնության հետ նրանց ծանոթացման հարցերին: Այդ պատճառով էլ 5 տարեկան երեխայի մեջ ձևավորվում են մի շարք պատկերացումներ շրջակա միջավայրի, նրա նկատմամբ վերաբերմունքի մասին, որոնք ավագ տարիքում կարող են հիմք հանդիսանալ էկոլոգիական կրթության համար: Հատկապես 5-6 տարեկանում արդեն կարելի է խոսել բնության խոր ընկալման և ուսումնասիրման մասին, որը և պայմանավորված է այդ տարիքի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններով:

Պետք է նշել, որ ավագ նախադպրոցական տարիքի երեխաները արդեն չեն սահմանափակվում առանձին կոնկրետ փաստերի յուրացմամբ, այլ ձգտում են թափանցել իրեր էության մեջ, հասկանալ երևույթների կապը: Դրա շնորհիվ էլ հնարավոր է դառնում պատկերացումների և պարզագույն հասկացությունների ձևավորումը, որոնք կարող են դառնալ գիտելիքների համակարգի միջուկը[5]:

Գիտական հետազոտություններով ապացուցված է, որ ավագ նախադպրոցականներն անցում են կատարում ընդհանուր պատկերացումներից դեպի կոնկրետ մտածողությունը: Զարգանում են երևակայությամբ առարկաները համեմատելու, նրանց ընդհանուր հատկանիշներով ընդհանրացնելու,իր մտքերը բանավոր ձևակերպելու և որոշակի դատողություն անելու կարողությունները: Երևան է գալիս մտածողության տրամաբանական ընդհանրացման ընդունակությունը: Այսպես, օրինակ, Ս.Ն. Նիկոլաևայի հետազոտությունները ցույց են տվել, որ ավագ նախադպրոցականներն ունեն բնության բազմաբնույթ ընկալման մեծ հնարավորություններ: Նա գտնում է, որ էկոլոգիական պատկերացումների ձևավորումը կարող է ընթանալ ողջ նախադպրոցական տարիքում, բայց կրտսեր նախադպրոցական տարիքում երեխաները կարող են ըմբռնել միայն եզակի կապերը, այն դեպքում, երբ ավագները կարող են ըմբռնել համալիր հատկանիշների կապերը:

Նախադպրոցականների կրթության և դաստիարակության հիմնախնդիրներով զբաղվող ռուս մանկավարժներ Ի.Ա. Հայդուրովան և Զ.Պ. Պլախոյը ցույց են տվել, որ հատուկ կազմակերպված դիտումների դեպքում ավագ նախադպրոցականները կարող են հասկանալ բուսական համակեցությունների ներսում գոյություն ունեցող կենսացենոզային կապերի շղթաները:

Ե.Ֆ. Տերենտևան նույնպես հիմնավորում է, որ ավագ նախադպրոցականները ընդունակ են բացահայտելու ավելի բարդ կապեր և կապերի շղթաներ, մի շարք կենսասենզոնային կապեր անտառային համակեցությունների, մարգագետինների, ջրամբարների ներսում, թռչունների չվելու պատճառները, կենդանիների և բույսերի կյանքի կախվածությունը միաժամանակ մի քանի գործոններից: Այսինքն՝ ավագ

[5] Марковская М.М. Уголок природы в детском саду.-М.:Просвещение,1989.-165с.

նախադպրոցականների մեջ արդեն ձևավորվում է նրանց շրջապատող բնության բավականին ճիշտ և ամբողջական պատկերը[6]:

Ժամանակակից նախադպրոցական տիրապետում է բնության մասին պատկերացումների, գիտելիքների բավականին ընդարձակ ծավալի: Միայն թե հաճախ այդ գիտելիքները ձևավորվում են հեռուստահաղորդումներ, գովազդների, մուլտֆիլմերի, հեքիաթների ազդեցությամբ:

Է.Ալեքսանդրյանը և ուրիշները նշում են. «Նախադպրոցական տարիքի երեխայի մտավոր դաստիարակության կարևորագույն խնդիրն է երեխաներին գիտելիքներ տալ բնության մասին: Այդ գիտելիքներն օգնում են բացահայտել, հասկանալ երևույթները, նրանց մեջ եղած էական կապերը, պատկեարցումներ կազմել իրականության այս կամ այն բնագավառի առավել կարևոր կողմերի,օրինաչափությունների մասին»:

Յուրաքանչյուր տարիքային մակարդակում երեխաները գիտելիքներ են ստանում բնական երևույթների, նրանց փոխկապակցվածության մասին: Շրջապատող աշխարհի վերաբերյալ երեխայի պատկերացումներն աստիճանաբար ձևավորվում են մանկապարտեզի խաղասենյակի նկարները և անկենդան բնության երևույթները, բույսերի, կենդանիների աճն ու զարգացումը դիտելու ընթացքում: Օրինակ՝ ԱՄՆ-ում, Շվեդիայում, Գերմանիայում հատկապես մեծ ուշադրություն է դարձվում երեխայի կողմից բնության օբյեկտների հուզական ընկալմանը և զգացողություններին: Սակայն, եթե կրտսեր նախադպրոցական տարիքում ուսուցման դրդապատճառներում գերիշխում է երեխայի հուզական վերաբերմունքը, ապա ավագ նախադպրոցական տարիքում, իհարկե, ըստ վերը նշված դրդապատճառի, հայտնվում են նոր դրդապատճառներ՝ հասարակական անհրաժեշտությունը և ճանաչողական հետաքրքրությունը:

Նախադպրոցական տարիքում ձևավորվում են հիմնական մտածողական գործողություններ կատարելու ընդունակությունը,սկզբնավորվում է վերացական

[6] Максимова Л.И. Теория и методика экологического образования детей дошкольного возраста:Учеб.-метод.комплекс Л.И.Максимова.Якутск:Изд.-во Центра дистанцион.образ.ИРО МО РС (Я),2002.-118с.

մտածողությունը, ըմբռնելի են դառնում պատճառահետևանքային կապերը: Այս տարիքում կարևորագույն խնեիրներից է ճանաչողական հետաքրքրության և իմացական կարողության՝ որպես ուսումնական գործունեության դրդապատճառի ձևավորումը: Էկոլոգիական դաստիարակության դրդապատճառներից են նաև երեխայի ճանաչողական ակտիվությունը և շրջապատող միջավայրի հուզական ընկալումը

Ինչպես նշվեց, նախադպրոցականներին բնորոշ է աշխարհի ամբողջական ընկալումը: Այս տարիքում երեխան դեռևս ամբողջությամբ չի տարանջատում իրեն իր կենսական ու սոցիալական միջավայրից: Նա դեռ չգիտի՝ ինչն է պատկանում իրեն (հոգեկանը, սուբյեկտիվը), և ինչը՝ ոչ (բնության օբյեկտները): Ընկալման այս որակը տարիքի բարձրացման հետ աստիճանաբար վերանում է, այդ պատճառով էլ շատ կարևոր է օգտագործել այն տվյալ տարիքային փուլում էկոլոգիական կրթությունն իրագործելիս:

Էկոլոգիական կրթության տեսանկյունից նախադպրոցականի ևս մեկ էական առանձնահատկություններից է ոգեպաշտությունը. երեխան բնության անշունչ առարկաները և երևույթներն օժտում է գիտակցությամբ, շունչ ու հոգի է տալիս նրանց: Այստեղից է սկսում ձևավորվել բնությունը որպես մեկ ամբողջական կենդանի օրգանիզմ ընկալելու կարողությունը,ինչն էական դեր ունի էկոլոգիական կրթության և դաստիարակության մեջ: Շարունակական էկոլոգիական կրթության համակարգի նախադպրոցական փուլի կազմակերպման յուրահատկությունը պայմանավորված է այդ տարիքի համար բնորոշ գործունեության հիմնական ձևով՝ խաղով: Ֆիզիկական զարգացման տեսանկյունից ավագ նախադպրոցական տարիքը բնութագրվում է երեխաների շարժողական և կողմնորոշման ունակությունների զարգացմամբ, որը բավականաչափ ընդլայնում է աշխատանքային գործունեության մեջ մեթոդների և ձևերի օգտագործման հնարավորությունները: Այս տարիքում է իրականացվում երեխա-երեխա, երեխա-մեծահասակ, երեխա-շրջապատ հարաբերությունների կառուցումը,այսինքն՝ երեխայի աստիճանական սոցիալականցումը[7]: Ձևավորվում է

[7] Воронкевич О.А. Добро пожаловать в экологию.-М.,2005.-170с.

նախադպրոցականների ներքին դիրքորոշումը շրջապատի մարդկանց նկատմամբ, զարգանում է սեփական «ես»ի և սեփական արարքների նշանակության գիտակցումը:

Ի տարբերություն կրտսեր նախադպրոցականների՝ փոխվում է ավագ նախադպրոցականների սոցիալական կարգավիճակը (դերը), որն արտացոլվում է գործունեության ձևի փոփոխման մեջ, առաջին հերթին՝ սյուժետադերային խաղերում: Նախադպրոցականի մեջ ի հայտ է գալիս տարրական պարտականությունների կատարման անհրաժեշտության զգացումը. նա ընդունակ է ինքնուրույն կատարելու մեծահասակի ցուցումները, բացի այդ, երեխայի մեջ ծագում է շրջապատի կողմից ճանաչվելու անհրաժեշտություն: Այս առում էլ կարևոր է, որ հենց այս տարիքում ձևավորվեն երեխայի էկոլոգիական գիտակցությունն ու մշակույթը, ինչպես նաև բնության և մարդկանց նկատմամբ սեփական արարքները վերլուծելու ունակությունը: Էկոլոգիապես գրագետ մարդ դաստիարակելու համար կարևոր է դեռևս ավագ նախադպրոցական տարիքում երեխայի զարգացմանը խթանող պայմանների ապահովումը: Բայց քանի որ ավագ նախադպրոցականները դեռևս չեն կարող կառավարել իրենց արարքները, ապա այդ խնդիրները կարող են լուծվել ընդհանուր դաստիարակության, այդ թվում՝ էկոլոգիական դաստիարակության ազդեցությանբ:

Էկոլոգիական կրթությունը յուրաքանչյուր տարիքային փուլի ճանաչողական, հուզական և դրդապատճառային մակարդակներում անգնահատելի նշանակություն ունի և ամփոխարինելի դեր է կատարում երեխայի համակողմանի զարգացման գործում: Ընդ որում մանկավարժական լավագույն պայմանների ապահովումը ակնկալում է երեխայի գործունեության ձևերի արդյունավետ իրականացում և հարստացում, ինչպես նաև մեծերի և հասակակիցների հետ հաղորդակցման բովանդակության ընդլայնում:

- ✓ Ավագ նախադպրոցական տարիքային խմբում երեխաներին ներկայացնում են անկենդան բնության առարկաների հատկությունները և որակները (օրինակ, ջուրթափանցիկ հեղուկ, որը հոսում է):

- ✓ Երեխաների մոտ ձևավորվում է պատկերացումներ նրա մասին, որ բույսերը ջերմության և խոնավության կարիք ունեն, իսկ կենդանիները չեն կարող ապրել առանց բազմազան սնունդի, ջրի, տաքուկ անկյունի։

- ✓ Երեխաները յուրացնում են ընդհանրացված հասկացությունները, օրինակ՝ ծառը, թփերը, խոտային ծածկույթը, ծաղիկները, բանջարեղենը, մրգերը, վայրի և ընտանի կենդանիները։

- ✓ Ավագ խմբի դաստիարակները շարունակում են սովորեցնել, թե ինչպես դիտարկել բնության երևույթները։ Երեխաներին սովորեցնում են որոշել դիտարկման խնդիրը, նրանք տիրապետում են հետախուզական գործողությունները, ջանում են համեմատել, անել եզրահանգումներ։

- ✓ Ինչպես միջին նախադպրոցական տարիքում, ավագ նախադպրոցական տարիքում նույնպես երեխաներին շարունակում են դիտարկել կենդանիների և բույսերի հանդեպ սեր, բայց հիմա նրանք պետք է գործածեն դրանք պրակտիկայում՝ խնամելով իրենց ընտանի կենդանուն։

- ✓ Ավագ խմբում հիմնական է դառնում երեխաների մոտ կապերի և հարաբերությունների մասին գիտելիքների ձևավորման խնդիրը։ Երեխաներն իմանում են բույսի աճի և զարգացման փուլերի մասին,բնության մեջ եղանակային փոփոխությունների և դրանց պատճառների մասին։

Շրջապատող միջավայրի օբյեկտների բազմազանությունը թույլ է տալիս դաստիարակին կազմակերպել երեխաների հետաքրքիր և օգտակար գործունեություն։ Բնության մեջ դիտարկման, խաղի և աշխատանքի գործընթացում երեխաները ծանոթանում են բնության երևույթների և օբյեկտների հատկությունների և որակների հետ, սովորում են նկատել դրանց փոփոխությունները և զարգացումը։ Նրանց մոտ ձևավորվում է հետաքրքրասիրությունը։ Ստանալով գիտելիքներ և կարողություններ ավագ նախադպրոցականներին առաջարկվում է օգտագործել դրանք պրակտիկայում.երեխաները խոնավեցնում են ավազը,թրջում են ձյունը ավելի ամուր շինվածք ստանալու համար, կավից

պատրաստում են այնպիսի շինություններ, որպեսզի կարողանան պահել ջուրը: Այս գործունեության պրոցեսում տեղի է ունենում գիտելիքների հետագա կատարելագործում և մտավոր կարողությունների զարգացում: Երեխայի անհատականության ձևավորման վրա դրական ազդեցություն ունի բնության մեջ աշխատանքը: Հենց այդ աշխատանքն է տալիս երեխային զգալի և նշանակալի արդյունքներ: Խնամելով բույսեր և կենդանիներ երեխան բնության հանդեպ ցուցաբերում է հոգատարություն: Աշխատանքի մեջ կա ճանաչման ակտիվ գործընթաց և ստացված գիտելիքների օգտագործում: Բնության մեջ աշխատանքի պրոցեսում կոփվում է երեխայի առողջությունը տեղի է ունենում նրա հոգեկանի զարգացում: Այս դեպքում շատ կարևոր է դաստիարակի դերը: Նա պետք է ստեղծի պայմաններ,որոնք կապահովեն երեխայի ակտիվությունը և ինքնուրույնությունը շրջապատող միջավայրի հետ ծանոթանալու ժամանակ: Երեխայի անհատի զարգացման վրա բնության ազդեցությունը կապված է բնության երևույթների և օբյեկտների մասին նրա մոտ որոշակի գիտելիքների ձևավորմամբ:

Բնության մասին պարապմունքները երեխային օգնում եմ կողմնորոշվել տարբեր առարկաների որակների, նշանների և հատկությունների մեջ: Եվ եթե խոսենք այն խնդիրների մասոն, որոնք կանգնած են դաստիարակի առջև՝ երեխաներին ծանոթացնել բնության հետ, ապա երեխաների մոտ առաջինը կձևավորվի գիտելիքների տարրական համակարգը[8]: Բնության մասին գիտելիքների համակարգը ներառում է նրա օբյեկտների և երևույթների, ինչպես նաև դրանց միջև կապերի ու հարաբերությունների մասին գիտելիքներ: Բնության մասին գիտելիքները նախադպրոցականների մոտ ձևավորվում է պատկերացումների մակարդակով, որի մեջ արտացոլված են էական, բայց արտաքին արտահայտված նշանները, կապերն ու հարաբերությունները:

Գիտելիքների համակարգի յուրացումը կապված է բնության հետ երեխաների ճանաչողական հարաբերության զարգացումից: Այն ի հայտ է գալիս հետաքրքրասիրության մեջ, երբ ձգտում է իմանալ որքան հնարավոր է շատ: Գիտելիքների ձևավորման մեջ մեծ է աշխատանքային նորարարությունների և

[8] Иванова А.И.Методика организации экологических наблюдений и экспериментов в детском саду:Пособие для работников дошкольных учрежденй А.И.Иванова.М.:ТЦ Сфера,2003,-56с.

կարողությունների դերը։ Իմանալով բույսերի և կենդանիների մասին մանրամասներ և, որ պետք է հոգատար լինել կենդանի օրգանիզմների հանդեպ երեխան կձգտի տիրապետել բույսերի և կենդանիների մասին խնամքի տարբեր միջոցներին, ինչպես նաև կկարողանա ճիշտ ընտրել դրանք այս կամ այն պարագայում։ Բնության մասին գիտելիքները խրախուսում են երեխաներին ուշադիր լինել դրա նկատմամբ։ Բարի գործերն ու արարքները ամրապնդվում են այն դեպքում, երբ գիտակցում են բնության պաշտպանության անհրաժեշտությունը։ Սակայն ուշադիր վերաբերմունքը բնության հանդեպ անհնար է ձևավորել միայն գիտելիքների վրա հենվելով։ Բնության մեջ աշխատանքը համարվում է ակտիվ աշխատանքը բնության մեջ։

Երկրորդ խնդիրը՝ ձևավորել ավագ նախադպրոցականների աշխատանքային նորություններ ու հմտություններ։ Որպեսզի երեխաները հասկանան անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ պայմաններ։ Պարապմունքների ժամանակ սովորեցրածը պետք է ամրապնդվի ամուր աշխատանքային նորարարություններով և հմտություններով, որը հիմք է ստեղծում բնության նկատմամբ սիրո համար։ Աշխատանքային նորարարություններն ու հմտությունները, որոնք ձեռք են բերվում մանկության ժամանակ երբենք չեն վերանում, այլ կատարելագործվում են դառնալով աշխատանքի ավելի բարդ ձևեր։ Բնության մեջ երեխաների աշխատանքը տալիս է հսկայական արդյունք։ Դրանով էլ այն գրավում է երեխաներին, առաջացում է ուրախություն և բույսեր ու կենդանիներ խնամելու ցանկություն։

Երրորդ խնդիրը՝ երեխաների մոտ ձևավորել բնության հանդեպ սեր։ Այս խնդիրը բխում է դաստիարակության մարդասիրական ուղղվածությունից և բնության պաշտպանության անհրաժեշտությունից։ Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքը ենթադրում է բարի գործերի և արարքների հայտնվելը այն դեպքում,երբ դա անհրաժեշտ է, իսկ դրա համար երեխաները պետք է իմանան, թե ինչպես խնամել ծաղիկները, բույսերը և կենդանիները և ինչպիսի պայմաններ ստեղծել դրանց բարենպաստ աճի և զարգացման համար։ Բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորման համար հատուկ նշանակություն ունի

կենդանի օրգանիզմի մասին գիտելիքներ,անկենդան բնության օբյեկտներից տարբերակելու կարողությունը[9]։

Բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքը կապված է դիտարկման զարգացման հետ, այսինքն՝ երեխայի մոտ դաստիարակել բնության հանդեպ սիրո զգացումը։ Անհրաժեշտ է ձգտել նրան, որ ավագ խմբի նախադպրոցականը անտարբեր չանցնի այս կամ այն բնության երևույթի կողքով,որն առաջացնում է տագնապ, որպեսզի նա հետագայում ցուցաբերի խնամք բնության հանդեպ։

Այսպիսով՝ անընդհատ էկոլոգիական կրթության և դաստիարակության համակարգում նախադպրոցական շրջափուլը տարբերվում է մյուս աստիճաններից երեխաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններով, նրանց ընկալման և աշխարհի մասին գիտելիքների յուրացման ընդհունակություններով։

[9] Каменева Л.А.Методика ознакомления детей с природой в детском саду.Учеб.пособие для педагогических училищ по спец.<<Дошкольное воспитание>>,Л.А.Каменева,Н.Н.Кондратьева,Л.М.Маневцова,Е.Ф.Терентьева;Под ред. П.Г.Саморковой.-М.:Просвещение 1991.-240с.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում
(Համալիր պարապմունք ավագ խմբում)

Էկոլոգիական դաստիարակությունն ուղղված է գիտելիքների, մարդ-բնություն հարաբերությունների, էկոլոգիական գիտակցությամբ պայմանավորված վարքագծի ձևավորմանը: Համալիր պարապմունքի թեման՝ Աշնանային այգի: Համալիր է կոչվում այն պարապմունքը, որի ընթացքում համակցվում են մի քանի մեթոդիկաներ և երեխաները ստանում են ավելի խորքայի գիտելիք առաջադրվող նյութի վերաբերյալ Նպատակն է՝ գիտելիք տալ երեխաներին բնության մասին, խոսել ծառերի, ծառատեսակների մասին, թվարկել անունները՝ պտուղը և համապատասխան ծառատեսակը: Ինչպես նաև սովորեցնել նկարել խնձոր, խնձորը ծառի ճյուղին:

Ընթացքը՝ Դաստիարակը պատմում է . “Աշուն է, տարվա գեղեցիկ եղանակներից մեկը: Դանդաղ պարելով օդում ,ծառերից թափվում են դեղնած տերևները,խշշում են ոտքերի տակ: Այգում հասել են քաղցրահամ մրգերը, (կարող ե՞ք թվել մի քանիսը): Այգում հասել է նաև խնձորը: Խնձորը շատ համեղ, հյութալի և շատ օգտակար միրգ է: Խնձորները տարբերվում են իրենց համով, գույնով, չափերով: Խնձորները լինում քաղցր և թթվաշ,լինում են մեծ,փոքր և միջին չափերի, հանդիպում են կանաչ, կարմիր, կարմրաթուշ,դեղին գույնի խնձորներ: Խնձորը պարունակում է մի շարք վիտամիներ և պիտանի նյութեր, որոնք անհրաժեշտ են մարդուն: Խնձոր սիրում են և՛մեծերը, և՛փոքրերը: Այն կարելի է ուտել հում, թարմ վիճակում, բայց կարելիէ նաև եփել մուրաբաներ,հյութ քամել,չիր պատրաստել….Իսկ այժմ պատկերացրեք, որ մեր լուսաուտից երևում է խնձորենու ճյուղը՝օրինակ այսպիսին: Ցուցադրում է օրինակը,երեխաների հետ ճշտում է խնձորների, տերևների, ճյուղի ձևը և գույնը: Առաջարկում է նկարել ,ցուցադրում է հերթականությունը: Նկարելուց հետո ներկում են,ճյուղը՝շականակագույն, տերևները ՝կանաչ,խնձորը՝ կարմիր: Նկարելուց

և գունավորելուց հետո ,դաստիարակը առաջարկում է ֆիզկուլտ դադար-ռիթմիկ մարմնամարզություն՝ “Խնձորի բերքահավաք” (ցանկացած երաժշտական ռիթմով)

- Քայլք տեղում կամ խմբասենյակում՝ “Գնում ենք այգի”
- Շնչառական վարժություն-”Շնչում ենք խնձորի բույրը”
- Բարձրացնել սկզբից աջ,հետո ձախ ձեռքը(փորձում ենք հասնել խնձորներին)
- Ցատկ տեղում(խնձորները մեր վերևում են և մենք ամեն կերպ փորձում ենք քաղել)
- Վերցնում ենք զամբյուղները կամ դույլերը և կատարում ենք բերքահավաք:

Վերջում դաստիարակը ամփոփում է միտքը ասելով . -Ի՞նչ գեղեցիկ այգի է ստացվել,շատ աշխատեցինք և շատ խնձոր հավաքեցինք ,իսկ հիմա եկեք մեր հավաքած խնձորները հյուրասիրենք միմյանց:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցականների էկոլոգիական կրթության բովանդակությունը առաջին հերթին պետք է դիտարկել անընդմեջ էկոլոգիական կրթության համակարգի շրջանակներում: Այդ նպատակով էլ կրթական այլ աստիճանների համար նախատեսված բովանդակության ընտրության սկզբունքները մենք փորձել ենք կոնկրետացնել, հարմարեցնել և մշակել կրթության նախադպրոցական օղակի համար՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախադպրոցական տարիքում գիտելիքները շատ քիչ դեր են խաղում, քան նրան հաջորդող կրթական աստիճաններում, և դրանք երեխաների համար պետք է լինեն հասանելի և գրավիչ:

Բնության հանդեպ սերը կարելի է դաստիարակել միայն գիտելիքների հիմքի վրա, ինչպես մենք արդեն նշել ենք, բույսերի և կենդանիների, նրանց կյանքի պայմանների, հիմնական պահանջմունքների, ինչպես նաև դրանք խնամքի նորարարությունների և կարողությունների մասին:

Բնության հետ երեխաների սիստեմատիկ ծանոթացումը սկսում են առաջին և երկրորդ կրտսեր խմբերից: Այս տարիքում կարևոր է, որպեսզի երեխաների մոտ ընթանա գիտելիքների կուտակում, այսինքն, բնության առանձին օբյեկտների մասին կոնկրետ պատկերացումներ. բնության նյութերի և նրա հատկությունների, բույսերի կառուցվածքի և ջրի հանդեպ նրանց պահանջմունքի, կենդանիների արտաքին տեսքի և նրանց շարժման միջոցների, սնվելու մասին: Երեխաներին ծանոթացնում են որոշ կենդանիների՝ կատվի, շանհավի ձագերի հետ:

Ավագ նախադպրոցականները պետք է հասկանան բնության երևույթների միջև մի քանի կապերը. քամին փչում է-ծառերն օրորվում են, արևը շողում է եղանակը տաքանում է: Այս դեպքում կիրառվում է դիտարկում: Դիտարկման ընթացքում դաստիարակը սովորեցնում է երեխաներին հետազոտական գործողությունները: Շատ կարևոր է սովորեցնել երեխաներին պատմել դիտարկման արդյունքների մասին: Դաստիարակի խնդիրն է երեխաների մոտ ձևավորել բնության հանդեպ էմոցիոնալ դրական և հոգատար վերաբերմունք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, /5-6 տարեկանների համար/, Երևան 2007թ էջ:

2. Воронкевич О.А. Добро пожаловать в экологию.-М.,2005.-170с.

3. Гогоберидзе А.Г., Солнцева О.В. Дошкольная педагогика с основами методик воспитания и обучения. – СПб.: Питер, 2013. – 464 с.

5. Дьяченко В. К.. Организационная структура учебного процесса и ее развитие. М., Педагогика, 1989, сс25-30.

6.Иванова А.И.Методика организации экологических наблюдений и экспериментов в детском саду:Пособие для работников дошкольных учреждений А.И.Иванова.М.:ТЦ Сфера,2003,-56с.

7. Каменева Л.А.Методика ознакомления детей с природой в детском саду.Учеб.пособие для педагогических училищ по спец.<<Дошкольное воспитание>>, Л.А.Каменева, Н.Н.Кондратьева, Л.М.Маневцова, Е.Ф.Терентьева; Под ред. П.Г.Саморковой.-М.:Просвещение 1991.-240с.

8. Монтессори М. Дом ребенка. М., 1920, с. 120—131.

9. Марковская М.М. Уголок природы в детском саду.-М.:Просвещение,1989.-165с.

7. Максимова Л.И. Теория и методика экологического образования детей дошкольного возраста: Учеб.-метод.комплекс Л.И.Максимова. Якутск:Изд.-во Центра дистанцион.образ.ИРО МО РС (Я),2002.-118с.